լշ–ներին։ Վերջին լ–ը միացած են Կազան–Բաշի լեռներին հարաւային ծայրով, իսկ արեւելա — հիւսիսային կողմից Խախամին լ–ին։ Այս լեռներից իջնող առուներն են. Կուռնց (կրկին Վ. եւ Ս.), Հնուտ, Իափ, Զեօչք, Ծագոց, Սեմէգրէկ, Մումանց, Սեմերջիկ, Փիսիրիկ, Խենէշ, Կունտ կամ Կունդ–Ոթանի եւ Բախչա, որոնք Կիսկիմի սահմանի վրայ են, իջնում են Աղաջ–Քիլիսէից եւ խառնուում Ճորոխին, ոռոգելով համանուն գեղերը, մացրանները, ախոռները, եայլաներն, վանքերն ու աւերակները։

Այս բոլոր գեղերում կան բազմաթիւ ամրոցների, դղեակների[1], բերդերի տաճար–

քիլիսան ուղղակի "Նկեղեաց - անտառի" թարգմանութիւնն է։

1 Յայտնի է, որ Բագրատունիները աւեր էին ինչպէս Բաբերդոն-Սմբատաւանին, այդպէս էլ նրանց էր պատկանում Սպերը։ Բայց թէ Բաբերդոնի, Բալախռի եւ թէ Հովտիկի ու Սպերի ամբողջ հողերը բացարձակապէս չէր կարող նրանց պատկանել. այլ այս գաւառներում կային ուրիշ սեփականատէր-կալուածատէրեր, որոնք ունէին իրենց Ոստանն ու գեղերը այլեւայլ կողմերում։ Եթէ նոյն իսկ որեւէ կերպով տիրացած էլ լինէին, ժառանգները բաժնուելիս՝ այլեւայլ մասեր ստանում եւ առանձնացնում էին կալուածները։ Սպերի Հովտի մէջ գտնուած այլեւայլ ամրոցներն, ագարակներն, "Մեծանց ագարակներ" ինքն ըստ ինքեան պատմում են, որ Հովիտը բաժնուած է եղել մի երկու տասնեակ "մեծերի" կամ նախարարների մէջ։ Թէեւ այս լեռնականների մէջ լեզուի փոփոխմունքով ը դարձել է լ կամ յ ա-շ եւ այսպէս շարունակաբար պէս-պէս կրճատուել, բայց եթէ Ալէքանցը–Արեգանց կարդանք, Քայանցը՝ Քարանց, Գալկոնցը՝ – Գարգարաց, Էբրանցը՝ – Աբրեղանց կամ Աբրահամանց, կա-